ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

12 դեկտեմբերի 2019 թ. N 1043-Ա

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 494-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 26-ի «Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Ճարտար և Զարդանաշեն համայնքների անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» N 494-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 3-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) արոտների ջրարբիացում. Ճարտար համայնքում նախատեսվում է արոտավայրերի սահմաններում գտնվող տասներկու վայրերում կենդանիների ջուր խմելու համար նախատեսված տարբեր երկարությամբ նովերի տեղադրում ու վերանորոգում և այդ նովերում մշտական ջուր ապահովելու համար ջրագծի անցկացում, իսկ Զարդանաշեն համայնքում՝ համայնքային արոտավայրերի սահմաններում կամ արոտ տանող ճանապարհներին գտնվող հինգ վայրերում կենդանիների ջուր խմելու համար նովերի տեղադրում, հին նովերի վերանորոգում, ջրագծերի անցկացում և այլ աշխատանքների իրականացում: Պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 18 285 400 (տասնութ միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար.

4) միջդաշտային ճանապարհների փշալարապատում. պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 9 408 600 (ինը միլիոն չորս հարյուր ութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ գումար.».

2) NN 1 և 2 աղյուսակները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Բ. ՍԱՀԱԿՅԱՆ***

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի դեկտեմբերի 12-ի
N 1043 - Ա որոշման

« Աղյուսակ N 1

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐ ԵՎ ԶԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

/հազ. դրամ/

Հ/Հ	***Ներդրումների նպատակը***	***2019թ.***	***Այդ թվում՝ ըստ եռամսյակների***			
			1-ին	***2-րդ***	***3-րդ***	***4-րդ***
1.	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	28.0	-	28.0	-	-
2.	Արոտների ջրարբիացում	18 285.4	-	10 494.9	-	7 790.5
3.	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	731.4	-	419.8	-	311.6
4.	Միջդաշտային ճանապարհների փշալարապատում	9 408.6	-	8 913.1	-	495.5
5.	Միջդաշտային ճանապարհների փշալարապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	376.3	-	356.5	-	19.8
6.	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 38 000 ՀՀ դրամ)	4 750.0	-	190.0	2 470.0	2090.0
7.	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (1500 մետր)	3 000.0	-	3 000.0	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		***36 579.7***	-	***23 402.3***	***2 470.0***	***10 707.4***

Աղյուսակ N 2

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ՃԱՐՏԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

/հազ. դրամ/

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2019թ.	Այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**20.0**	-	20.0	-	-
2	Արոտների ջրարբիացում	**14 396.8**	-	7 707.0	-	6 689.8
3	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**575.9**	-	308.3	-	267.6
4	Միջդաշտային ճանապարհների փշալարապատում	**9 408.6**	-	8 913.1	-	495.5
5	Միջդաշտային ճանապարհների փշալարապատման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**376.3**	-	356.5	-	19.8
6	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 38 000 ՀՀ դրամ)	**570.0**	-	-	570.0	-
7	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (800 մետր)	**1 600.0**	-	1 600.0	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		**26 947.6**	**-**	**18 904.9**	**570.0**	**7 472.7**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԶԱՐԴԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

/հազ. դրամ/

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2019թ.	Այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1	Համայնքի հողաշինարարական հատակագծի ձեռքբերում	**8.0**	-	8.0	-	-
2	Արոտների ջրարբիացում	**3 888.6**	-	2 787.9	-	1 100.7
3	Արոտների ջրարբիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	**155.5**	-	111.5	-	44.0
4	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 38 000 ՀՀ դրամ)	**4 180.0**	-	190.0	1900.0	2090.0
5	Միջդաշտային ճանապարհների բարեկարգում (700 մետր)	**1 400.0**	-	1400.0	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		**9 632.1**	**-**	**4 497.4**	**1 900.0**	**3 234.7**

»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ